

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Պատմության օլիմպիադայի մարզային փուլ (2018-2019 ուստարի)
9-րդ դասարան (տևողությունը՝ 150 րոպե)

ա) Հայոց պատմություն (15 միավոր)

- | | |
|--|--------|
| 1. Ե՛րբ է սկսվել նոր քարի դարը Հայկական լեռնաշխարհում.
ա/ Ք. ա. 12-րդ հազ.
բ/ Ք. ա. 10-րդ հազ.
գ/ Ք. ա. 8-րդ հազ.
դ/ Ք. ա. 5-րդ հազ. | 0,5 մ. |
| 2. Ո՞վ է հիմնադրել Տուշպա (Վան) մայրաքաղաքը.
ա/ Արամու
բ/ Մենուա
գ/ Արգիշտի Ա
դ/ Սարդուրի Ա | 0,5 մ. |
| 3. Որտե՞ղ է թագադրվել Տրդատ Ա-ն.
ա/ Աթենք
բ/ Արտաշատ
գ/ Տիգրանակերտ
դ/ Հռոմ | 0,5 մ. |
| 4. Ո՞վ էր առաջնորդում հռոմեական բանակը Խառանի ճակատամարտում.
ա/ Մարկոս Անտոնիոս
բ/ Մարկոս Կրասոս
գ/ Լուկիոս Լուկուլլոս
դ/ Գնեոս Պոմպեոս | 0,5 մ. |
| 5. Ո՞ր թվականին է ստորագրվել հայ-արաբական պայմանագիրը.
ա/ 639 թ.
բ/ 640 թ.
գ/ 652 թ.
դ/ 656 թ. | 0,5 մ. |
| 6. Քանի՞ գավառների բաժանեց Արտաշես Ա-ն Մեծ Հայքի տարածքը.
ա/ 20
բ/ 120
գ/ 190
դ/ 300 | 0,5 մ. |
| 7. Ո՞ր արքան է Անին դարձրել մայրաքաղաք.
ա/ Աշոտ Գ
բ/ Սմբատ Բ
գ/ Աբաս
դ/ Գագիկ Ա | 0,5 մ. |
| 8. Ե՛րբ է վախճանվել Լևոն Բ Մեծագործը.
ա/ 1187 թ.
բ/ 1196 թ.
գ/ 1198 թ.
դ/ 1219 թ. | 0,5 մ. |
| 9. Ե՛րբ է կնքվել Սևրի պայմանագիրը.
ա/ 1918 թ. հունիսի 4
բ/ 1920 թ. օգոստոսի 10
գ/ 1920 թ. նոյեմբերի 29
դ/ 1920 թ. դեկտեմբերի 2 | 0,5 մ. |
| 10. Ո՞ր տնտեսական քաղաքականությունն է առաջինը իրագործվել Հայաստանի խորհրդայնացումից հետո.
ա/ նէպ
բ/ ռազմական կոմունիզմ
գ/ կոլեկտիվացում
դ/ ինդուստրացում | 0,5 մ. |
| 11. Ընտրե՛ք ժամանակագրական ճիշտ հաջորդականությամբ տարբերակը.
ա/ Ալեքսանդրապոլի պայմանագիր, Երևանի համաձայնագիր, Մոսկվայի պայմանագիր
բ/ Ալեքսանդրապոլի պայմանագիր, Մոսկվայի պայմանագիր, Երևանի համաձայնագիր
գ/ Երևանի համաձայնագիր, Մոսկվայի պայմանագիր, Ալեքսանդրապոլի պայմանագիր
դ/ Երևանի համաձայնագիր, Ալեքսանդրապոլի պայմանագիր, Մոսկվայի պայմանագիր | 0,5 մ. |
| 12. Հայկական զորքերի հաղթական ո՞ր ճակատամարտն է տեղի ունեցել 1727 թ. մարտին: | 0,5 մ. |

13. Ո՞վ էր ղեկավարում Բեռլինի վեհաժողովում հայերի պահանջները ներկայացնելու համար ստեղծված հատուկ պատվիրակությունը:

0,5 մ.

14. Դասավորե՛ք ժամանակագրական ճիշտ հաջորդականությամբ. 1 մ. (1 սխալի դեպքում՝ 0 մ.)

- ա/ Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը:
- բ/ Սարդարապատի հերոսամարտը:
- գ/ Անդրկովկասյան կոմիսարիատի ստեղծումը:
- դ/ Բաթումի պայմանագիրը:
- ե/ Երզնկայի զինադադարը:
- զ/ Արևմտահայերի առաջին համագումարը:

1	2	3	4	5	6

15. Կազմե՛ք համապատասխան զույգեր.

1. ՀԿԿ կենտկոմի 1-ին քարտուղար
2. Լեոնահայաստանի (Սյունիքի) սպարապետ
3. ՀՀ վարչապետ
4. ՀՍԽՀ ժողկոմխորհի նախագահ
5. ՀՍԽՀ արտգործոժողկոմ

ա. Գ. Նժդեհ բ. Ալ. Մյասնիկյան գ. Ա. Խանջյան դ. Ալ. Խատիսյան ե. Ա. Մռավյան

1 մ. (1 սխալի դեպքում՝ 0 մ.)

1	2	3	4	5

16. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 ճիշտ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)

- ա/ 1935 թ. ստեղծվել է ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի հայկական մասնաճյուղը:
- բ/ 1935 թ. կազմակերպվել է Հայաստանի կերպարվեստի թանգարանը:
- գ/ «Նամուս»-ը հայկական առաջին հնչունային կինոնկարն է:
- դ/ Հայ կինոարվեստի ստեղծման ու զարգացման գործում մեծ է Վրթանես Փափազյանի դերը:
- ե/ Ալեքսանդր Թամանյանի նախագծով կառուցվել են օպերայի և բալետի թատրոնը, կառավարական տունը և Ծիծեռնակաբերդի հուշահամալիրը:
- զ/ Արա Սարգսյանը կերտել է Մեսրոպ Մաշտոցի և Սահակ Պարթևի խմբաքանդակը:

1	2	3

17. **Շարադրանք.** ներկայացրե՛ք հայերի մասնակցությունը Հայրենական մեծ պատերազմին. մասնակիցների թիվը, հայկական ազգային դիվիզիաները, ԽՍՀՄ հայ հերոսները և զորավարները: 5 մ. (ստուգման նվազագույն քայլը՝ 0,5 մ.)

բ) Համաշխարհային պատմություն (5 միավոր)

1. Ո՞ւմ օրոք է Մաուրյան պետությունը հասել իր հզորության գագաթնակետին. 0,5 մ.

- ա/ Մոհենջոդարո բ/ Խարապպա
- գ/ Բրահմա դ/ Աշոկա

2. Ո՞վ է Բ. ա. 444-429 թթ. 15 տարի անընդմեջ ընտրվել Աթենքի առաջին ստրատեգոս. 0,5 մ.
ա/ Սոլոն
բ/ Պերիկլես
գ/ Պիսիստրատ
դ/ Կլիսթենես
3. Ո՞ւմ անվան հետ է կապվում Բյուզանդիայի Ոսկեդարը. 0,5 մ.
ա/ Վասիլ Ա
բ/ Հուստինիանոս Ա
գ/ Լևոն Զ Իմաստասեր
դ/ Կոստանդին Է Ծիրանածին
4. Ո՞վ է Ֆրանկական թագավորության առաջին արքան. 0,5 մ.
ա/ Մերովինգ
բ/ Պիպին Կարճահասակ
գ/ Բլոդվիգ
դ/ Կարլոս Մարտել
5. Ինչպե՞ս էր կոչվում Հին Հռոմի խոշորագույն տաճարը. 0,5 մ.
ա/ Պարթենոն
բ/ Ակրոպոլիս
գ/ Պանթեոն
դ/ Ագորա
6. Համապատասխանեցրե՛ք գիտնականներին իրենց ոլորտների հետ.
1. Զ. Ֆրոյդ
2. Ա. Այնշթայն
3. Դ. Մենդելևս
4. Գ. Մենդել
- ա. հոգեբան բ. ֆիզիկոս գ. գենետիկ դ. քիմիկոս

1 մ. (1 սխալի դեպքում՝ 0 մ.)

1	2	3	4

7. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 ճիշտ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)

- ա/ Ազգերի լիգան ուներ 42 հիմնադիր անդամներ:
բ/ Մահաթեմա Գանդիի քաղաքական հենարանը Հնդկաստանի ազգային կոնգրես կուսակցու-թյունն էր, որը ձգտում էր միավորել ողջ ազգը:
գ/ Մյունխենյան գործարքով Գերմանիան և ԽՍՀՄ-ը գաղտնի պայմանավորվածություն էին ձեռք բերում Լեհաստանի զավթման հարցում:
դ/ ՆԱՏՕ-ի ստեղծմանն ի պատասխան՝ ԽՍՀՄ-ը նախաձեռնեց Վարշավյան դաշինքի ստեղծումը:
ե/ Ազգերի լիգայի Խորհուրդն ուներ 5 մշտական անդամ:
զ/ Ազգերի լիգայի աշխատանքները համակարգում էր ԱՄՆ նախագահ Վ. Վիլսոնը:

1	2	3

Հանրապետական օլիմպիադայի հանձնաժողովի նախագահ՝

ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի դոցենտ, պատմ. գիտ. թեկնածու Մ. Մալխասյան

05.03.2019 թ.